# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶ
# ԿԱԹՆԱՋՐԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության
Լոռու մարզի Կաթնաջուր համայնք,
գ. Կաթնաջուր 13 փողոց, 1 շենք
հեռ. +374 99-00-03-02

## ՈՐՈՇՈՒՄ

«16» ՍԵՊՏԵՄԲԵՐ 2019Թ. ԹԻՎ 26

## ՅՈՒՐԱ ՎՈԼՈԴՅԱՅԻ ՌՈՒՇԱՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԿԱԹՆԱՋՈՒՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐՎՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ՇԻՆՈՒԹՅՈՒՆ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ԳՈՐԾԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՕՐ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի $219^{1}$-րդ հոդվածով և հիմք ընդունելով Յուրա Վոլոդյայի Ռուշանյանի նկատմամբ վարչական իրավախախտման գործի քննության 13.09.2019թ.-ի նիստի արձանագրությունը՝ Յուրա Վոլոդյայի Ռուշանյանի կողմից Կաթնաջուր համայնքի 7 փողոց 25 տան հարակից տարածքում (կադաստրային ծածկագիր 06-052-0048-0001) համայնքային սեփականություն համարվող բնակավայրերի այլ նպատակային նշանակության հողամասում շինություն ինքնակամ կառուցելու մասին՝ որոշում եմ.

1. Յուրա Վոլոդյայի Ռուշանյանի կողմից, Կաթնաջուր համայնքի 7 փողոց 25 տան հարակից տարածքում (կադաստրային ծածկագիր 06-052-0048-0001) համայնքային սեփականություն համարվող բնակավայրերի այլ նպատակային նշանակության հողամասում շինություն ինքնակամ կառուցելու վերաբերյալ վարչական իրավախախտման գործի լրացուցիչ քննության օր նշանակել 2019 թվականի սեպտեմբերի 23-ին, ժամը 11:00-ին:

2. Սույն որոշման մասին օրենքով սահմանված կարգով ծանուցել Յուրա Վոլոդյայի Ռուշանյանին:

Համայնքի ղեկավար՝ Ա. Պապոյան